Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԻԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

ՅԵ. ԲՈՒՏՈՒՋՈՎԱ

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄԸ

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1929

ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՑԵՎ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ № 4

334
Բ
Լ սայ.
338.1Ռ(09)
Ա 1/3864
Ա 1/3864

ՅԵ. ԲՈՒՏՈՒՋՈՎԱՅԻ

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄԸ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ
ՑԵՐԵՎԱՆ 1929 թ.

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 1748բ.
ՏԻՐԱԺ 3000

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Ամբողջ աշխատավոր գյուղացիության կոոպերացման խնդիրը և այն մեծ դերը, որ սպառողական կոոպերացիան պետք է խաղա կուլտուրական հեղափոխության և կանանց լայն մասսաների—կոոպերացիայի անդամուհիների,—կուլտուր-կենցաղային մակարդակը բարձրացնելու գործում, սպառողական կոոպերացիայի առաջ դնում են հրամայական պահանջ՝ ուժեղ թափով ներս գրավել իր շարքերը աշխատավոր կանանց և նրանց քաշել կոոպերատիվ ղեկավարության աշխատանքի մեջ։

Աշխատավոր կանանց կոոպերացումը,—այս բավականին հետ մնացած և սպառկոոպերացիայի բարդ ճյուղը,—այժմ ընդունում է ավելի քան խոշոր հասարակական, տնտեսական և կենցաղային նշանակություն։

Այժմ հիմնական խնդիր հանդիսանում է կոոպերատիվ աշխատանքի և կոոպերատիվ կազմակերպությունների մեջ քաշելն աշխատավոր կանանց։ Կոոպերացիայի կին անդամներն արդեն ապացուցեցին, որ նրանք հանդիսանում են մեր հասարակական-տնտեսական շինարարության այս ճյուղի գնահատելի աշխատողներ։ Կոոպերատիվ աշխատանքը և կոոպերատիվ շինարարությունը հանկանալի ու շատ մոտ են

Կուլտուր-կենցաղային աշխատանքը, վոր տարվելու յե կանանց կենցաղը բարելավելու համար, հանդիսանում և կանանց կոոպերատիվ աշխատանքի մեջ քաշելու ամենակենսական միջոցներից մեկը։

Ծավալել լայն հասարակայնություն կենցաղային աշխատանքի շուրջը և դեպի այդ աշխատանքը դրավել մեր բոլոր կազմակերպությունների ուշադրությունը — պետք և բռնի առաջին տեղը։

Մեզանում դեռևս բավականաչափ մշակված չենն, ինչպես դեպի կոոպերացիան և կոոպերատիվ աշխատանքը կանանց գրավելու ուղիներն ու միջոցները, այնպես ել կին կոոպերատորների և կին փայատերերի մեջ տարվելիք կոոպերատիվ աշխատանքի բուն բովանդակությունը։

Բոլոր կոոպերատիվ կազմակերպությունները պետք և այդ խնդիրը դարձնեն առաջնակարգ նպատակ։ Այդ աշխատանքում ոժանդակություն պետք և ցույց տա ընկեր Բուտուզովայի այս գիրքը. ոժանդակություն կանանց մեջ տարվելիք կոոպերացիայի աշխատանքի հարցերում։ Պետք և ձեռք բերել փորձառություն, պետք և աշխատանքի սովորեցնել այն կազմակերպություններին, վորոնք այս խնդրում ունին նվաճումներ, և ընդհանուր ուժերով հասնել այն բանին, վոր կանանց կոոպերացիայի մեջ գրավելու աշխատանքը և նրանցից կոոպերացիայի ակտիվ աշխատողներ դարձնելը հանդիսանա մեր կոոպերատիվ կազմակերպությունների առաջին խնդիրներից մեկը։

Ի. ԼԵՈՒԲԻՄՈՎ

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄԸ

«Խորհրդային իշխանության սկսած գործը կարող է առաջ շարժվել միայն այն ժամանակ, երբ այդ գործին, վողջ Ռուսաստանում, մասնակցեն, փոխանակ մի քանի հարյուր կանանց, միլիոն ու միլիոն կանայք։ Այն ժամանակ սոցիալիստական շենքը, մենք հավատացած ենք, կլինի հաստատուն»։

(Լենին. Ճառ բանվորուհիների համագումարում)։

ԻՆՉՈ՞Ւ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՆՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատավոր կանանց կոոպերացման հարցին տալով մեծ նշանակություն, սպառողական կոոպերացիան վերջին ժամանակներում բացել է մեծ աշխատանք այդ ընագավառում։

Այս աշխատանքի առաջին շրջանում խորհրդային կոոպերացիայի իդեյան աշխատավոր կանանց մեջ կրում էր ագիտացիայի և պրոպա-

գանդայի բնույթ, յերբ կուսակցական մարմինները և կոոպերացիան տանում էին մեծ կամպանիա աշխատավոր մասսաների մեջ բացատրելու կանանց մասնակցության նշանակությունը կոոպերացիայի կառուցման գործում, յերբ կոոպերացիան նոր-նոր միայն շոշափում ու փնտրում էր աշխատանքի ձևերը ու մեթոդները կանանց կոոպերացման վերաբերյալ և բարձրացնելու նրանց կոոպերատիվ ակտիվությունն ու ինքնագործունեությունը։

Կոոպերացիայի կանանց կոոպերացման վերաբերյալ աշխատանքի ներկա շրջանը հանդիսանում է իրեն արդարացնող կազմակերպչական ձևերի ամրացման շրջան։ Կոոպերացիան իրեն նպատակ է դրել վոչ միայն մեծ քանակությամբ աշխատավոր կանանց քաշել կոոպերացիայի անդամների շարքը, վոչ միայն մասնակից դարձնել նրանց կոոպերացիայի կառուցման գործին, այլև լավացնել կանանց աշխատանքը կոոպերացիայի կառուցման բոլոր բնագավառներում։

Սակայն վոչ բոլոր կոոպերատիվ կազմակերպություններն ու նրանց աշխատակիցները տալիս են այս աշխատանքին կարևոր նշանակություն։ Կանանց կոոպերացման աշխատանքի կայուն սիստեմ սահմանած և խոշոր հետե-

վանքների հասած կազմակերպություններին զուգընթաց, գոյություն ունին սպառողական միություններ ու ընկերություններ (բարեբախտաբար, նրանք կազմում են բացարձակ փոքրամասնություն), որոնք բավականաչափ ակտիվ աշխատանք չեն տանում կին մասսաները կոոպերացնելու գործում։

Ուստի կարևոր է մի անգամ ևս հիշեցնել կոոպերացիայում աշխատողներին բանվորական և գյուղական կոոպերացիայի տնտեսական, կենցաղային և քաղաքական նշանակությունը բանվորուհիների և գեղջկուհիների համար։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերցրեք քաղաքի որևե խանութ, լինի նամանուֆակտուրայի խանութ կամ կենսամթերքների, և, յեթե դուք հետևեք, թե ովքեր են այդտեղ գնումներ կատարում, կտեսնեք, որ գնումներ կատարողների բացարձակ մեծամասնությունն աշխատավոր կանայք են։ Ահա մեկ որինակ Մոսկվայի կոոպերատիվի կենսամթերքների մեկ խանութից. միջին հաշվով որական այդտեղ մտնում են 1.137 գնորդներ, ըստ որում դրանցից կանայք լինում են 587, որ կազմում է 51,6%։

Այժմ եկ վերցրեք նույն կոոպերատիվի մանուֆակտուրայի խանութը. միջին հաշվով որական այդտեղ հաճախում են 710 գնորդներ, դրանցից 505-ը կամ 71%-ը կանայք են։

Այս միայն գնումների նկատմամբ. ապա դրանց — գնված մթերքների — դործածության աշխատանքն ամբողջովին ընկած է նույն կանանց և տնային տնտեսուհիների վրա — կերակուր յեփելը, հագուստ կարելը և այլն։

Բայց կանանց տնտեսական նշանակությունը կոոպերացիայում չի համապատասխանում նրանց թվական մասնակցությանը կոոպերացիայում։ Այդ նույն կոոպերատիվում անդամների 23,2%-ը կանայք են, իսկ վարչության և վերատուգիչ հանձնաժողովի կազմերի միմիայն 2,3% են կանայք։ Յեթե ուսումնասիրենք այլ կոոպերատիվներ, նույն յերևույթը կտեսնենք ամեն տեղ։

Բերված թվերը բնականաբար հետևյալն են ասում. 1) քաղաքում բանվոր ընտանիքի համար անհրաժեշտ գնումներ կատարողը յեվ գնած մթերքները պատրաստող ու գործածողը հանդիսանում է աշխատավոր կինը, 2) նա ամենից շուտ է տեսնում պակասություններ կոոպերատիվի աշխատանքներում. 3) նա հնարավորություն չի ունի կազմակերպված ձևով ուղ-

ություն տալու կոոպերացիայի կառուցվածը՝ բանվոր ընտանիքի սպառողական կարիքներին լիովին սպասարկելու խնդրում:

Գյուղում գեղջկուհին, բացի այն, վոր նա նույնպես հանդիսանում է գյուղական ընտանիքի սպառողական առարկաներ գնողը, միաժամանակ մասնակցում է գյուղական տնտեսության շատ մթերքների (կաթնամթերքներ, վուշ, կանեփ և այլն) արտադրության աշխատանքներին. արտադրություն, վորի իրացումը քաղաքում կոոպերացիայի միջոցով, և վոչ մասնավոր միջնորդի, ունի անագին նշանակություն։

Սպառկոոպերացիայի հավ, ձու, յուղ, պանիր և այլ մթերքների արտահանության ներկա խոշոր գործարքները պահանջ են առաջադրում—սովորեցնել գեղջկուհուն արտահանության համար մթերքներ պատրաստել և ցույց տալ նրան ճանապարհ իր պատրաստած մթերքները հանձնելու կոոպերացիային, կազմակերպելով նրան այնպես, վորպեսզի մասնավոր միջնորդը բոլորովին դուրս շպրտվի արտադրողի ու կոոպերացիայի և արտադրողի ու քաղաքացի սպառողի միջից։

Կոոպերատիվ կազմակերպությունները պետք է ուսումնասիրեն նաև աշխատավոր կանանց սպառողական պահանջները. ըստ վորում

կոոպերացիան հանդիսանում է արդյունաբերության արտադրության գլխավոր ապրանքատար խողովակը։

Այս ուսումնասիրության փորձի հիման վրա կոոպերացիան կարող է պետարդյունաբերությանը տալ համապատասխան պատվերներ բավարարելու համար սպառող մասսայի անհրաժեշտ ապրանքների պահանջները։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՄԵՋ

Հին կենցաղը դեռևս ամուր բռնած ունի իր ճանկերի մեջ աշխատավոր կնոջը։ Կենցաղային պատճառները մեծ արգելք են հանդիսանում վոչ միայն բանվորուհիների և գեղջկուհիների ակտիվության նկատմամբ կոոպերացիայի ստեղծագործական աշխատանքին անմիջական մասնակցության գործում, այլ և փայատերերի շարքը մտնելու խնդրում։

Կոոպերացիայի դերը մեր յերկրի սոցիալիստական շինարարության խնդրում շատ մեծ է, և նրա հաջող իրագործման համար կոոպերացիան պետք է խոշոր մասնակցություն վերցնի իր վրա հին, այլանդակ կենցաղի փոխարեն նոր կենցաղ կառուցելու գործում։

Մինչև այժմ վոչ միայն աշխատավոր մարդկանց, այլ և կանանց մի մասի մեջ համոզմունք կա կազմված, վոր փայատեր, խորհրդի անդամ կամ վորևե հասարակական կազմակերպության մեջ մասնակցելու իրավունքը պատկանում է «տան մեծին»—մարդուն։ Կոոպերատիվին անդամագրվում են բացառապես ընտանիքի գլխին կագնած տղամարդիկ, և միմիայն այնտեղ, ուր գյուղացու տան կամ բանվոր ընտանիքի գլխին կանգնած է կին կամ այրի, այդտեղ է վոր մենք ունենք կոոպերացված կանայք և այն ել մեծ տոկոսով, քան տղամարդիկ։

Կբերենք մի տիպիկ որինակ Իվանովո-Վոզնեսենսկ նահանգի, Շույսկի գավառի, Վասիլևյան շրջանից։ Այդ շրջանում կանայք կազմում են ազգաբնակության 52% ը, իսկ կին—ղեկավարող ընտանիքների թիվը կազմում է 25%։ Կոոպերացված ընտանիքների թիվը, վորոնց գլխին կագնած են տղամարդիկ, կազմում են 42% (տղամարդ—ղեկավարող բոլոր ընտանիքների նկատմամբ). իսկ այնտեղ, ուր ընտանիքների գլխին կանգնած են կանայք, կոոպերացված է 60% (նույնպես կին—ղեկավարող բոլոր ընտանիքների նկատմամբ)։

Մեկ այլ որինակ. Ցերաբսեկցիայի 1926

թվի հոկտեմբերի 1-ին վերաբերող թվերը ցույց են տալիս, որ պրոֆմիությանմեջ յեղող արդամարդկանցից կոոպերացված են 54,3%, իսկ կանանցից՝ 55,2%։

Այս որինակները դալիս են ապացուցելու այն, որ այն դեպքում, յերբ աշխատավոր կինը հանդիսանում է ինքնուրույն իր տնտեսության յեվ իր ընտանիքի մեջ, յերբ նա ունի իր աշխատավարձը, որը կարող է կարգադրել այնպես, ինչպես ցանկանա, յերբ նա կենցաղային ու նյութական տեսակետից կախում չունի իր ամուսնուց, ապա նա կոոպերացիա յե դիմում ավելի շուտ-շուտ ու ավելի հանույթով, քան տղամարդը:

ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ցեվ, վերջապես, կանանց կոոպերացման վերաբերյալ աշխատանքի յերբորդ և հիմնական խնդիրը քաղաքականն է։ «Խորհրդային իշխանությունը, որպես աշխատավորների իշխանություն, իր գոյության առաջին իսկ ամիսներում կանանց վերաբերող որենսդրության մեջ կատարեց վճռական հեղաշրջում։ Այն որենքներից, որոնք կնոջը պահում էին կախյալ վիճակում,

խորհրդային հանրապետության մեջ քար-քարի վրա չմնաց» (Լենինի ճառը բանվորների համագումարում)։

Անհրաժեշտ է միայն որենքով հաստատված այդ միջոցները կիրառել մեր յերկրի կառուցման բոլոր ասպարեզներում, այդ թվում նաև կոոպերացիայում. այն է՝ կնոջը դնել արդամարդուն հավասար պայմանների մեջ։ Մենք մի բոպե անգամ չպիտի մոռանանք, վոր կոոպերացիան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում հանդիսանում է հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների ամրապնդման գենքը, ուստի աշխատավոր կանանց կոոպերացիայի կառուցման աշխատանքների մեջ քաշելու խնդիրը պետք է հանդիսանա կոոպերատիվ կազմակերպությունների հիմնական խնդիրներից մեկը։

Այստեղ, ի հարկե, կան մեծ դժվարություններ. պետք է հաղթահարել կենցաղային խոչընդոտները, տնտեսական խնդիրները, դանդաղաշարժությունը և անվստահությունը դեպի կանանց, վորպես հասարակական գործիչների, մի շարք կոոպերատորների կողմից և այլն։ Բայց մեր կոոպերացիան կուսակցության և խորհրդային մարմինների աջակցությամբ կարող կը լինի հեռացնել այն բոլոր դժվարությունները, վոր ցցված են նրա ճանապարհին։

ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վորպես կանոն, կանանց կոոպերացման աշխատանքը կենտրոնացած է միությունների կազմակերպչական բաժիններում։ Միությունները և քաղաքային բանկոոպները պարտավոր են ունենալ կանանց կոոպերացման համար հատուկ կին-հրահանգիչ կամ հրահանգիչ, այդ աշխատանքը կատարող։ Այն կոոպերատիվ կազմակերպությունները, վորոնք գտնվում են մեծ քանակությամբ աշխատավոր կանայք ունեցող շրջանում, ինչպես, որինակ, Իվանովո-Վոզնեսենսկու շրջանը, ուր կան մեծ թվով մանածագործարանային կին բանվորներ, կամ գտնվում են այնպիսի գյուղական շրջաններում, ուր տղամարդիկ գնում են քաղաքներում աշխատելու և տարվա մեծ մասն իրենց տնտեսությունը վարում են գեղջկուհիները,—անպայման իրենց միությունների ապարատներում պետք է ունենան աշխատավոր կանանց կոոպերացման համար հատուկ կին-հրահանգիչ։

Շատ անհրաժեշտ են կանանց կոոպերացման համար հատուկ հրահանգիչներ մանավանդ ազգային յերկրամասերում. ինչպես, որինակ, Միջին Ասիայում, Կովկասում, Ադրբեջանում, ուր

դեռևս շատ ամուր են հին կենցաղի տրադիցիաները, ուր կանանց մեջ տարվելիք աշխատանքը պետք է հաշվի առնի ազգային առանձնահատկությունները, ուր նա հանդիպելու յե հազար ու մի դժվարություններին, կապված կենցաղային պայմանների հետ, և ուր հրահանգչին առաջադրվելու յեն ավելի շատ պահանջներ, ահա այս պայմաններում հրահանգիչը պիտի լինի և կոոպերատոր և հասարակական, տանելով իր աշխատանքն ազգաբնակության կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղիով։

Այսպիսով յուրաքանչյուր միություն յեվ քաղաքային բանկոոպ պետք է ունենա աշխատավոր կանանց կոոպերացման համար կամ հատուկ հրահանգիչ յեվ կամ այդ աշխատանքը վարող պատասխանատու աշխատակից։

ՀՐԱՀԱՆԳՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Կանանց կոոպերացման վերաբերյալ աշխատանքի հարցերը կապել իր Միության կամ բանկոոպի ամբողջ աշխատանքի հետ։

2. Կապ պահել Միության և տեղական կուսակցական կոմիտեյի այն բաժնի հետ, որը տանում է աշխատանք բանվորուհիների և գեղջկուհիների մեջ։

Ռ 3864

ՀՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴ. ՀԱՅՐ
ԿԵՆՏՐԱԼԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

3. Կապ հաստատել այլ տեսակի կոոպերացիաների հետ բանվորուհիների և գեղջկուհիների կոոպերացման վերաբերյալ հարցերի նպատակով։

4. Իր Միության գործունեության շրջանի աշխատավոր կանանց կոոպերացման վերաբերյալ աշխատանքի ուսումնասիրությունը և այս ուսումնասիրության հիման վրա կազմել տեղերի համար գանապան դիրեկտիվ ցուցումներ։ Այդ ցուցումները պետք է բղխեն վոչ թե անհատական հրահանգչից, այլ միության կազմբաժնից կամ վարչությունից։

5. Իր միության հրահանգիչներին կամ վողջ ապարատը քաշել կանանց կոոպերացման աշխատանքի մեջ։

6. Կապ պահել պրոֆմիությունների հետ։

7. Հետևել վորպեսզի կատարվեն կանանց կոոպերացման վերաբերյալ գանագան դիրեկտիվները, տրված ինչպես գեկավար, այնպես էլ տեղական կուսակցական կոմիտեյի, կոոպերատիվ կազմակերպությունների, Միության, քաղաքային բանկոոպի կողմից։

Այսքանով, ի հարկե, չի սահմանափակվում կանանց կոոպերացման հրահանգչի աշխատանքի շրջանակը. ներքև մանրամասն կբերենք այն

բոլոր խնդիրները, որոնք դրված են հրահանգչի առաջ. ըստ որում այս բոլոր խնդիրները կապված են կոոպերացիայի առաջ դրված խնդիրների հետ իրենց ամբողջությամբ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՈՒՄԸ ԿԱՆԱՆՑ ՄԵՋ

Կանանց կոոպերացման ամբողջ աշխատանքը պետք է կառուցվի նախորոք կազմված պլանի վրա. պլան, որը պետք է մտնի միության վարչության կողմից հաստատված կազմակերպչական բաժնի աշխատանքի ընդհանուր պլանի մեջ։

Կանանց կոոպերացման աշխատանքի առանձին պլան թույլատրելի չէ միմիայն այն դեպքում, երբ նա այս կամ այն պատճառով չի մտել ընդհանուր պլանի մեջ, եթե նա արտացոլում է իր մեջ կոոպերացիայի կազմակերպչական և կուլտուր-կենցաղային աշխատանքի հիմնական խնդիրները և եթե նա կնայվի ու կը հաստատվի կազմ-բաժնի կողմից։ Նույնը բոլոր տեսակի հաշվետվությունների նկատմամբ, լինին նրանք հերթական հաշվետվություններ (յեռամսյակային, տարեկան և այլն) միության կամ ընկերության գործունեության մասին,

հաշվետվությունները, վորոնք ցույց պիտի տան պլանների իրագործման աստիճանը. նրանք այլ հարցերի շարքում բավական լրիվ ձևով պետք է ցույց տան նաև, թե կոոպերացիան վոր չափով է իրագործել աշխատավոր կանանց կոոպերացման աշխատանքի պլանը։

Իսկ այն դեպքում, յերբ միությունը կազմում է հաշվետվություն հատուկ նպատակներով. որինակ, սպառողական ընկերությունների նախընտրական կամպանիայի, խանութային հանձնաժողովների նախընտրական կամպանիայի, միջազգային կոոպերացիայի որվա, փայավճարային կամպանիայի և նման դեպքերի առթիվ, անհրաժեշտ է, վոր այդ հաշվետվությունների մեջ նույնպես ցույց տրվեր, թե այդ կամպանիաներում և աշխատանքների մեջ ինչ մասնակցություն են ունեցել աշխատավոր կանայք։

Այս նույն դիտողությունը վերաբերում է նաև միությունների հրահանգիչների կատարած հրահանգչական հետազոտություններին միութենական մասշտաբով։ Հաճախ նրանց հաշվետվությունների մեջ բացակայում են տեղեկությունները հետազոտված շրջանի կանանց կոոպերացման դրության մասին։

Միանգամայն հնարավոր կլինի լուսաբանել

հետագոտված շրջանի կանանց մեջ տարած աշխատանքը, յեթե անգամ հաշվետու զեկուցման մեջ չբերվի «կանանց կոոպերացումը» հատուկ գլուխ. լիովին բավական կլինի, յեթե ազգաբնակության կոոպերացման ատիճանը, վարչություններին, վերատուգիչ և խանութային հանձնաժողովները և այլն գործունեությունն ու կազմը լուսաբանող մասերում տեղ գտնի նաև աշխատավոր կանանց մասնակցության խնդիրը կոոպերացիայի կառուցման տվյալ ճյուղերում։

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ

Շատ արժեքավոր է ու անհրաժեշտ ներկա պայմաններում, վորպեսզի կանանց կոոպերացման աշխատանքի մեջ քաշվեն միությունների բոլոր հրահանգիչները, և վորպեսզի նրանց աշխատանքը չսահմանափակվի հարցի կիսավիճակագրական, կիսաինֆորմացիոն ուսումնասիրությամբ։ Անհրաժեշտ է վոր հրահանգիչը տեղում այնպես դասավորի իր ժամանակը, վորպեսզի նա հնարավորություն ունենա խորն ուսումնասիրել կանանց կոոպերացման վերաբերյալ միության գործադրվելիք մեթոդները և այդ աշ-

խատանքի համար առանձին տիպիկ յերևույթները։

Ավելորդ չի լինի, վոր հրահանգիչն այցելի պատգամավորական ժողովի կոոպերատիվ սեկցիաներին, զբուցի առաջ քաշվածների, պրաքտիկանտների և վարչությունների ու վերատուգիչ հանձնաժողովների կին անդամների հետ, բացատրի նրանց կոոպերացիայում տանելիք աշխատանքի ծավալը, խոսի վարչության հետ, յեթե այդ կարևոր ե, և վերջինի միջոցով հեռացնի այն պատճառները, վոր խանգարում են առաջ քաշվածներին ակտիվ աշխատանք՝ տանել։ Հրահանգիչը պարտավոր ե Միության կանանց կոոպերացման աշխատանքը վարող հրահանգչին կամ աշխատակցին հաղորդել իր տպավորությունները, առանձին դիտողությունները և այլն։

ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵՍՈՒՄԸ

Քաղաքային սպառակոոպերատիվների աշխատանքի հաշվեառման բոլոր ձևերում, ինչպես և միությունների կազմակերպչական հաշվետվությունների մեջ, կան գրաֆներ, ուր բերվում են կանանց մեջ տարվող աշխատանքը բնութա-

գրող բոլոր հիմնական ցուցանիշները։ Չնայած այդ բանին, 1926 թվի վիճակագրական խորհրդակցությունը հանգեց այն յեզրակացության, որ, վորպեսզի հեշտ լինի աշխատանքը պլանի յենթարկել և հեշտ լինի ուղղել նրա թերի կողմերն, անհրաժեշտ է տանել տվյալ աշխատանքի բաղմակողմանի ու լրիվ հաշվեառում։ Ուստի բոլոր միությունները, քաղաքային և կենտրոնական կոոպերատիվները պարտավոր են, հաշվեառման բոլոր ձևերի հետ զուգընթաց, յուրաքանչյուր յերեք ամիսը մեկ անգամ ուղարկել Ցենտրոսայուզին «կանանց աշխատանքը կոոպերացիայում» (ձև № 16) հաշվեառման ձևով յեռամսյա ամփոփումներ։

Հիշյալ ձևի լցնելը մեծ դժվարություններ չի ներկայացնում, ըստ վորում № 16 ձևի մեջ պահանջվող հիմնական տեղեկությունները բերվում են ամսական հաշվետվությունների մեջ, և նրանց ոգտագործումը մասնագիտական աշխատանք չի պահանջում, այլ պահանջում է գումարել և ամփոփել այդ տեղեկությունները մի ձևի մեջ։

Այս ասպարեզին վերաբերող հատուկ խնդիրները դրվում են միություններում և կոոպերատիվներում ինֆորմացիոն աշխատանք տանող աշխատակիցների վրա։ Աշխատանքի

կաշվեառումը պետք է դասավորվի այնպես, որ նա տա կանանց կոոպերացման հետագա աշխատանքը նպատակահարմար պլանավորելու համար խիստ հիմնավորված տվյալներ։

Միությունները պետք է կոոպերատիվ կազմակերպությունների գործունեությունը լուսաբանող աշխատանքի մեջ քաշեն գյուղական և կոոպերատիվ թղթակիցներին և սրան զուգընթաց, կին բաժինների ոժանդակությամբ, կրթել ու պատրաստել ակտիվ բանվորուհիների ու գեղջկուհիների միջից նոր կոոպերատիվ կին թղթակիցներ։

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԸ ՉԱՆԱՉԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Այն գլխավոր կազմակերպությունները, որոնց հետ պետք է տանել կոոպերացման աշխատանքը.

ա) Տեղական կուսակցական կոմիտեների կին բաժինները, որոնց հետ պահպանվում է կապ կանանց կոոպերացման աշխատանքի բոլոր ասպարեզներում։ Այս կապը կազմակերպչորեն ձևակերպում է կանանց կոոպերացման հրահանգիչը կամ պատասխանատու աշխատակիցը, որը մտնում է կին բաժիններին կից խորհրդակ-

ցությունների կազմի մեջ։ Միությունների կազմբաժինների կանանց կոոպերացման աշխատանքների, ինչպես և կոոպերացիայի այն աշխատանքների, որոնց մեջ կանանց մասնակցությունը պետք է մեծ տեղ գրավի, բոլոր պլանները նախորոք պետք է համաձայնեցվեն տեղական կին-բաժինների հետ և, նայած հարցի կարևորությանը, այդպիսին համաձայնեցվում է կին-բաժնի վարիչի հետ և կամ հաստատվում է բաժնի կողմից։ Նույնը կանանց կոոպերացման հարցերին վերաբերող թեզիսների, առաջարկությունների և բանաձևերի նկատմամբ, որոնք առաջադրվում են կոոպերացիայի կողմից վարչությունների նիստերին, լիազորական ժողովներին, հրահանգչական խորհրդակցություններին և այլն։

բ) Այն մյուս կազմակերպությունները, որոնց հետ սպառողական միությունները կապ են հաստատում, դրանք այլ տեսակի կոոպերացիաներն են։ Ինչ վերաբերում է այդ կապին, ապա այդ շատ կարևոր է. վերցրեք կանանցով ղեկավարվող տնտեսություններով հարուստ գյուղական մի շրջան։ Որինակ, Վորոնեժի նահանգը, ուր առաջ է գնացել թռչնաբուծությունը և ուր հավի ու ձվի պատրաստումները թե սպառողական կոոպերացիայի և թե գյուղատն-

տեսական կոոպերացիայի առևտրական գործունեության մեջ բռնում են խոշոր տեղ։ Այս դեպքում անհրաժեշտ է աշխատանքային կապ սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիաների մեջ։

Հետո, կանանց տնայնագործական աշխատանքներով հարուստ շրջաններում. ինչպես, որինակ, Վալոգդայի կրուժևա գործող կանանց շրջանում անհրաժեշտ է աշխատանքային կապ երկու տեսակի կոոպերացիաների մեջ։ Ըստ վորում, կանոնավոր փոխադարձ հարաբերություններ սահմանվելու դեպքում, շատ հեշտ է տնայնագործ կանանց քաշել սպառողական սիստեմի փայատերերի շարքը. այն դեպքում, երբ այս ցանկանում են իրենք, տնայնագործ կանայք, կարելի է համաձայնության գալ տնայնագործական կոոպերացիայի հետ և ստանալ նրանից փայավճարներ ի հաշիվ տնայնագործ կանանց հատանելիք գումարների՝ հանդեպ նրանց հանձնած ձեռագործների։

գ) Այն արդյունաբերական շրջաններում, ուր արդյունաբերության մեջ աշխատում են մեծ թվով կանայք, որինակ՝ Տվերի նահանգը, Իվանովո-Վոզնեսենսկու շրջանը և այլն, աշխատավոր կանանց կոոպերացման աշխատանքը հընարավոր է միմիայն պրոֆեսիոնալ կազմակեր-

պությունների ժամանակ աշխատակցությամբ ու աջակցությամբ։ Կարիքավոր բանվորուհիների համար փայտվճարների մուծման արտոնյալ կարգի և մի շարք նման այլ միջոցների սահմանումը պետք է տարվի ոչ միայն կոոպերացիայի գծով, այլ և պրոֆմիությունների կողմից, որոնց հետ հարկավոր է ունենալ աշխատանքային պայմանավորում և փոխադարձ աջակցություն։

դ) Բանվորուհի և գեղջկուհի աղջիկների կոոպերացման նկատմամբ անհրաժեշտ է աշխատանքային կապ հաստատել տեղական յերիտկոմիտեների հետ։ Կոոպերացնելով աշխատավոր կին յերիտասարդությունը, մենք պետք է տարածենք նրա վրա ոչ միայն կանանց կոոպերացման վերաբերյալ մշակված մեթոդները, այլ և կոոպերացման այն մեթոդները, որոնք մշակվել են և իրենց արդարացրել են յերիտասարդ կանանց կոոպերացիայի մեջ քաշելու նկատմամբ։

յե) Գյուղական շրջաններում և գյուղական սպառողական կոոպերատիվներում մեզ անհրաժեշտ է աշխատանքային սերտ կապ հաստատել կոոպերացման ասպարեզում, գյուղական փոխոգնության կոմիտեների և նման չքավոր գյուղացիների կազմակերպությունների հետ։ Այս կապն անհրաժեշտ է այն պատճառով, որ կո-

ոպերացիան միայնակ առանձին գեղջկուհիների նկատմամբ փայերի մաս-մաս մուծելու ժամկետները սահմանել չի կարող։ Կարիք կլինի ոգնել կոոպերացիային նաև նրանց նկատմամբ, վորոնք պետք է կոոպերացվեն ի հաշիվ չքավորների կոոպերացման ֆոնդի։

զ) Կենցաղային աշխատանքի ընդհանրացում. ինչպիսին է՝ մսուրների, «մոր և մանկան» անկյունների, կոնսուլտացիաների, մանկապարտեզների և այլն կազմակերպումը, հարկավոր է համաձայնության գալ ժողովրդական կրթության տեղական բաժինների և մասնավորապես մոր և մանկան պաշտպանության մարմինների հետ։

Նույնպես հասարակական սնունդի և նրա մեջ կանանց քաշելու աշխատանքների ընդհանրացում, կոոպերացիան համաձայնության է գալիս այն կազմակերպությունների հետ, վորոնք տանում են հասարակական սնունդի վերաբերյալ աշխատանք։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1924 թվից սկսած, յերբ կոոպերացիան անցավ կամավոր անդամագրման ձևին, մենք նկատում ենք փայատեր բանվորուհիների և գեղջկուհիների քանակի պլանաձև աճումը (տես աղյուսակը 31 յերեսում)։

Սպառկոոպերացիան վերջին ժամանակներում սկսել ե իր շարքերի մեջ առնել տանտրնտեսուհիներին — բանվորների և ծառայողների կանանց։ Այս աշխատանքն առանձնապես ծավալ ստացավ Մոսկվայում և Լենինգրադում, ուր սպառկոոպերացիան բավական ճկուն կերպով իր կազմակերպչական աշխատանքի ձևերը հարմարեցրեց աշխատավոր կանանց այդ անկազմակերպ մասսան ընդգրկելու համար։

Լենինգրադում, որինակ, գոյություն ունի ինստիտուտ տանտնտեսուհիների կոոպերատիվ լիազորների համար, վորոնք տանում են աշխատանք տանտնտեսուհիների մեջ բանվորական տներում, հանրակացարաններում և այլն։ Այս

լիազորների աշխատանքը ղեկավարելու համար գոյություն ունի տանտնտեսուհիների շրջանային կոոպերատիվ բյուրո։

Մոսկվայում շատ ընդհանրացել են ինտիտուտները անդամագրող կանանց համար, որոնք տանում են աշխատանք նույնպես բանվորական տներում։ Ապա վոր չափով տանտնտեսուհիները տեղ են գտել կոոպերացիայի մեջ։ Ստորև մենք բերում ենք տվյալներ միմիայն 86 կազմակերպությունների մասին։

Թվական	Ընդամենը վայրերը	Այդ թվում կանայք	Դրանցից տնտեսուհիներ	Տնտեսուհիների % վայրերի ընդհանուր թվի նկատմամբ	Տնտեսուհիների % կանանց վայրերի թվի նկատմամբ
1/X-26 թ	782.807	187.663	24.904	3,2	13,2

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր աշխատավոր կանանց կոոպերացման գործը քաղաքներում ավելի բարենպաստ պայմանների մեջ է գտնվում, քան գյուղերում։

Ցավ, յեթե համեմատելու լինենք կոոպերացիայի նշանակությունը աշխատավոր կանանց նկատմամբ, վորպես գնորդների հիմնական մասսա, յեթե հաշվի առնենք այն, վոր կանայք մեզ մոտ կազմում են տվյալ ազգաբնակության կեսից ավելին, ապա կստացվի իր տեսակի մկրատ լայն բացված բերաններով։

Սպառկոոպերացիայի փայատերերի աճման շարժումը

Թվականներ	ԸՆԴԱՄԵՆԸ ՓԱՅԱՏԵՐԵՐ			ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐՈՒՄ			ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐՈՒՄ		
	Ընդամենը	Այդ թվում կանայք	%	Ընդամենը	Այդ թվում կանայք	%	Ընդամենը	Այդ թվում կանայք	%
I/X—1924 թ.	7·104·831	1·122·718	15,8	3·575·729	847·448	23,7	3 529·102	275.270	7,8
I/X—1925 թ.	9·347·908	1·553·690	16,3	4·307 308	1 085.442	25,2	5·040·600	468.248	9,3
I/X—1926 թ.	11·584·023	1 867 754	17,9	4·476.172	1 123 519	25,1	7·260·276	782.494	10,7
I/X 1927 թ	—	—	—	—	—	—	9 683.109	1.165 640	12,0

Վորպեսզի հնարավոր լինի հեշտությամբ իրագործել կանանց կոոպերացումը, ամենից առաջ պետք է վերացնել աշխատավոր կանանց կոոպերացումը դանդաղեցնող պատճառները և, հաշվեառման յենթարկելով այդ պատճառները, գտնել տվյալ աշխատանքի համար ավելի ճկուն և կենսունակ ձևեր ու մեթոդներ։

ԿԱՆԱՆՑ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կանանց փոքր չափով անդամագրվելու առաջին պատճառը հանդիսանում է հին կենցաղի պայմանները, վորոնց վերացնելու համար պետք է աշխատանք տանի կոոպերացիան։

Մինչև այժմ էլ, մանավանդ գյուղական վայրերում, չի վերացել այն մտայնությունը, վոր փայատեր, կամ հասարակական աշխատող կարող է լինել և պետք է լինի այսպես կոչված ընտանիքի գլխավորը, տան գլխավորը—ամուսինը կամ հայրը։ Հատկանշական է, վոր նույնիսկ այն շրջաններում, ուր տղամարդիկ մեծ մասամբ գնում են քաղաքներ աշխատելու, և ուր բոլոր գնումները, տնտեսության վերաբերյալ բոլոր աշխատանքներն ընկած են տանտիկնոջ ուսերի վրա, այս դեպքում էլ կինը

կոոպերատիվի աշխատանքների վրա ազդեցություն ունենալ չի կարող. ըստ վորում նա անդամ չե, և փայը մուծված ե ամուսնու անունով։

Մինչև այժմ ել մեզանում շատ քիչ են մանկական հիմնարկությունները, ճաշարանները և լվացարանները, վորոնք կարողանային ազատել բանվորի կնոջը, գեղջկուհուն ավելորդ բթացնող տնային աշխատանքից, վորը զրկում ե նրանց նվիրվել հասարակական ոգտավետ, ստեղծագործական աշխատանքի։

Ցերկրորդ պատճառն ե նյութական կախումը ընտանիքում, սեփական դրամ չունենալը, վորով տանտնտեսուհին կամ գեղջկուհին կարողանար փայ մուծել կոոպերատիվում, այս սեփական աշխատավարձ չունեցող աշխատավոր կանանց գրուպպայի նկատմամբ։ Ինչ վերաբերում ե ձեռնարկություններում աշխատող կանանց, ապա դրանց միջին աշխատավարձը ցած ե բանվորի աշխատավարձից, ըստ վորում բանվորուհիների մեծ մասը, վոր վերջին ժամանակներումն ե մուտք ունեցել արդյունաբերության մեջ, ունի ցած կլասիֆիկացիա և ավելի փոքր չափով ե վարձատրվում, քան բանվորի միջին վարձատրությունն ե։

Բայց այս խնդիրն այնքան ել եական արդ-

գելք չեր հանդիսանա կանանց կոոպերացիային անդամագրվելուն, յեթե սպառողական միութիւնները և ընկերութիւնները կյանքի մեջ մտցնեին 39-րդ լիազորական ժողովի սահմանած արտոնութիւնները, այն է. փայի մասմաս վճարումը յերկու տարվա ընթացքում, հատկացումը փայերին գնումների պրեմիայի հաշվից և այլն։ Այնքան ել նյութական արգելք չեր հանդիսանա և այն դեպքում, յեթե նյութական շահագրգռումը դեպի կոոպերացիան աշխատավոր կանանց կողմից ավելի բարձրանար։ Յեթե կինն իր անդամության գրքույկի մեջ տեսներ իրական ոգուտ, շատ հավանական է, վոչ միայն բանվորուհին, այլ և գեղջկուհին և տանտանտեսուհին կարող կլինեին պոկել իրենց բյուջեյից փոքրիկ գումարներ և, ոգտվելով մաս-մաս վճարելու արտոնութիւնից, մուծել փայ։

Պատահում է և այսպես, թեև վոչ ամեն տեղ, վոր մի քանի միութիւններ կամ ընկերութիւններ, մեկ անդամի միջին փայը բարձրացնելու տենչով բռնված, ազատվում են լրիվ փայ չմուծած անդամներից, և դրանց մեջ հաճախ ընկնում են կանայք, վորպես աշխատավոր մասսայի կարիքավոր շերտ, և նրանց շատ դժվար է համեմատաբար կարճ ժամանակամիջոցում լրացնել իրենց փայի պակասը։ Այստեղ

շփոթում են միմիանց յերկու խնդիրներ, վորոնց մեջ չպիտի տեղի ունենա հակասություն. մի կողմից կոոպերացիան է, վոր ձգտում է իր սեփական միջոցները մեծացնել ի հաշիվ փայերի լրիվ մուծումների, մյուս կողմից՝ աշխատավոր կանանց կոոպերացումը, վորոնք կարող են անդամագրվել միայն արտոնյալ պայմաններով, յերկար ժամանակամիջոցում, իսկ այս իր հերթին ազդելու յե միջին փայի վրա նվազեցնելով այն։ Ցեվ պատահում է, վոր սպառողական ընկերությունները գնում են նվազագույն դիմադրության գծով, մաքրում են վոչ լրիվ փայ մուծողներին, ստանում են արտաքին եֆֆեկտ, բարձրացնելով միջին փայավճարը, բայց միաժամանակ կորցնում են մեծ թվով անդամներ, այն էլ չքավոր գյուղացիներ, թույլ միջակներ, տանտնտեսուհիներ—փոքր աշխատավարձ ստացող բանվորների կանայք։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄԸ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կոոպերացիայի աշխատանքը տվյալ բնագավառում պետք է ծավալվի յերկու ուղղությամբ. մեկ կողմից՝ աշխատավոր կանանց կենցաղային դրությունը բարելավելու միջոցների

ծավալման ուղիով, մյուս կողմից՝ կոոպերացիան աշխատավոր կանանց իր շարքերը քաշելու աշխատանքը պետք է տանի կոոպերացման նորմալ աճումը խանգարող պատճառները վերացնելու ուղիով։

Կանանց կոոպերացման աշխատանքը, փայավճարի մուծման պրոցեսը թեթևացնելու գործում, պետք է վերածվի մի շարք միջոցների։ Այժմ, յերբ 10 ռուբլի փայավճարը գյուղի համար և 15 ռուբլին քաղաքի համար անց է կացվում կանոնադրության կարգով, բոլոր կոոպերատիվ կազմակերպությունների կողմից, կոոպերացման քաղաքականության իսկական խնդիրը գառնում է փայերի մուծման թեթևացումը կանանց նկատմամբ, վորպես աշխատավորության նյութապես քիչ ապահովված մասի։ «Փայավճարը բարձրացնելու հետևանքով կան շատ դեպքեր, վոր մի ընտանիքի անդամները խնդրում են յերկու գրքույկի փայերն անցկացնել մեկ գրքույկի մեջ»—գրում են այս Նիժնի Նովգորոդից։

Հյուսիսային Կովկասի ինֆորմացիոն հաշվետվությունները ասում են.

«Ընտանիքի յերկրորդ անդամներին, մեզանում, անդամագրում են ընդհանուր հիմունքներով. վոչ մի արտոնություն մեզ մոտ չկա, վոր

հաճախ հակասում է նախորդ լիազորական ժողովի վորոշումներին»։ Այս բնորոշ դեպք է այն կոոպերատիվների համար, վորոնք ընթանում են նվազագույն դիմադրության ուղիով, թափելով իրենցից ժամկետների, արտոնությունների և այլ գլխացավանքները։ Ուստի սպառողական ընկերությունների և միությունների համար վորպես հիմնական խնդիր հանդիսանում է—իրականացնել դեկավար կոոպերատիվ կազմակերպությունների կողմից սահմանված արտոնությունները։

Կարելի յե բերել որինակ նաև դրական իմաստով։

«Կանանց ներս քաշումը վորպես փայատեր կատարվում եր արտոնյալ հիմունքներով։ Մեկ տարվա ընթացքում կոոպերացիայի մեջ մտել են 2.016 անդամ, նրանցից 75%-ը գեղջկուհիներ են։ Շրջանային միության կազմբաժնի կողմից ուղարկվել եյին ցուցմունքներ արտոնությունների վերաբերյալ ինչպես բանվորուհիների, այնպես էլ գեղջկուհիների համար»,—գրում են Կինեշեմակու շրջանային միությունից։

Առանձնապես պետք է նշել 1925 թվի հունվարի 5-ի ВУЦИК-ի վորոշումը այս հարցի նկատմամբ.

ա) Բանվորների և գյուղացիների կանայք, վորոնք մուծել են լրիվ փայ, նույնպես այրիները, հաշվել կոոպերատիվների (սպառողական և գյուղատնտեսական) փայատերեր, յեթե նրանք մուծեն միմիայն մուտքի վճար, ըստ վորում յերկուսը կրում են մեկ փայի պատասխանատվություն։

բ) Թեթևացնել բանվորուհիների, գեղջկուհիների և բանվորների կանանց կոոպերացումը փայի մաս-մաս մուծելու, փայը մթերքներով, ընկերության ոգուտներից վճարելու ճանապարհով։

գ) Մշակել հարկային արտոնություններ որինագիծ այն կոոպերատիվների համար, վորոնք կազմակերպելու յեն բանվորուհիներին և գեղջկուհիներին հովանավորող հիմնարկություններ։

Այս վորոշումով թեթևանում է փայատիրոջ ընտանիքի յերկրորդ անդամի լրացուցիչ պատասխանատվությունը, և այն ընտանիքները, վորոնք ունին մի քանի փայատերեր, կոոպերատիվի սնանկության դեպքում պատասխանում են սահմանված նվազագույն չափով. այն է՝ մեկ փայատիրոջ համար։

Իժևսկու բանկոոպը գործադրում է քաղաքի կարիքավոր աշխատավորության կոոպերաց-

ման ֆոնդ կազմակերպելու մեթոդը. «գործարանի բանվորուհիների կոոպերացումը մեզ մոտ հետ է մնում տանտնտեսուհիներից փայավճարի մեծ լինելու (15 ռուբլի) պատճառով։ Մենք կոոպերացնում ենք ցած կարգի բանվորուհիներին ի հաշիվ չքավոր ազգաբնակության կոոպերացման ֆոնդի, այլ կերպ անհնարին է»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ցած կարգ համարվում են ընտանիք ունեցող 2, 3 և 4 կարգի ստացողները։

Մեկ տարվա ընթացքում կոոպերացված են այդ ֆոնդի հաշվից 21 կին և 5 տղամարդ։ 1927 թվի ապրիլի 1 ին ֆոնդում մնում եր 1000 ռուբլի»։

Այն արտոնությունները, որ կոոպերացիան պետք է գործադրեր փայի մուծումը թեթևացնելու համար, հետևյալն է. քաղաքի համար—տանտնտեսուհիների և ընտանիքի յերկրորդ անդամների համար հերթական փայավճարը սահմանվում է 25 կոպեկ ամիսը, ինչպես նոր ընդունվողների համար, այնպես էլ նրանց համար, վորոնք վճարում են իրենց փայերի պակասորդը» (Ցերաբսեկցիայի շրջաբերականից)։

Մոսկվայի բանկոոպի լիազորական VI ժողովը վորոշել է փայատիրոջ ընտանիքի յերկ-

բորդ անդամի համար, վորն ինքնուրույն աշխատանք չունի, սահմանել ընդունված փայի կեսը, ներկա դեպքում 5 ռուբլի։

Գյուղում յերկարատև ժամկետներ սահմանվում են յուրաքանչյուր գեղջկուհու համար անհատաբար, նայած թե ինչ չափով ե նա ապահովված։ Ըստ վորում, ումը, ինչպիսի ժամկետ նշանակել—պետք ե վորոշեն միությունները։ Գեղջկուհին, վճարելով մուտքի վճար, համարվում ե արդեն հավասարազոր փայատեր և ոգտվում ե բոլոր փայատերերին հավասար իրավունքներով ու առավելություններով։ Ապա գեղջկուհիներին հնարավորություն ե տրվում լրացնել իրենց փայավճարները գնումների պրեմիաների հաշվից, վոր հասնելու յե նրանց սնտեսական տարվա վերջում։ Կարելի յե առաջարկել նաև հետևյալ միջոցը. ստանալով լրիվ փայ մուծած փայատիրոջ համաձայնությունը, նրան հասանելիք պրեմիան կարելի յե փոխանցել նրա ընտանիքի մյուս անդամների փայերը ծածկելու համար, յեթե նրանք ցանկանան անդամագրվել։ Կարելի յե առաջարկել գեղջկուհիներին և հետևյալը. փայը վճարելու համար կատարել կոոպերատիվում աշխատանք, այն ե՝ կիսատակառներ մաքրել, մեշոկներ կարկատել, խանութներն ու գրասենյակները մաք-

քել և այլն։ Նույն գեղջկուհու համաձայնությունն ստանալուց հետո, վորը աշխատել է կոոպերատիվում և ստանալիք ունի, կարելի է այդ ստանալիքը հաշվել նրա փայի պակասորդի դիմաց։

Չքավորուհիների կոոպերացման գործում մեծ դեր պետք է խաղան չքավորների կոոպերացման ֆոնդերը։ 1924—25 տարում ստորին ցանցի ֆոնդերի գումարը հասնում եր 1.350.000 ռուբլու, իսկ միությունների ֆոնդերը՝ 675.000 ռուբլու, և այսպիսով այդ տարվա համար չքավորների կոոպերացման ֆոնդին սպառողական կոոպերացիայի հատկացրած ընդհանուր գումարը կազմում եր վոչ պակաս յերկու միլիոնից։ 1925—26 տարում հատկացրած ֆոնդը հասնում եր 5 միլիոնի։ Վոչ լրիվ տեղեկություններով 1925—26 թվին կոոպերացված եր 750.000 չքավոր։ Այդ ֆոնդերը, պետք է ասել, դեռ լրիվ չափով չեն ոգտագործված։ Իսկ մի քանի տեղերում ոգտագործվել են վոչ իրենց անմիջական նպատակին. որինակ, բաց եյին թողնվում միջոցներ կամուրջներ նորոգելու համար, դպրոցներին և այլն։

Ցենտրոսայուզի վարչության կողմից հրահանգված է վորպեսզի այդ ֆոնդերը լրիվ կերպով գործադրվեն իրենց անմիջականնպատակին։

Չքավոր գեղջկուհիների ահագին մեծամասնությունը կազմում են միայնակ կանայք, որոնք իրենց տնտեսությունը վարում են առանց աղամարդու ոգնության։ Դրանք բոլորն այրիներ են, որոնք կորցրել են իրենց ամուսիններին իմպերիալիստական պատերազմում, դրանք կարմիր բանակայինների կանայք են, միայնակյացներ են և այլն։ Բացի այդ, չքավոր կանանց մեծամասնությունը, որ նույնպես պետք է կոոպերացվի, դրանք չքավորների կանայք են, որոնք դիմում են քաղաք զբաղմունք գտնելու համար։ Ահա այն հիմնական խավը, որոնց մենք պարտավոր ենք առաջին հերթին կոոպերացնել ի հաշիվ չքավորների կոոպերացման ֆոնդի։

Պետք է ամեն կերպ խուսափել չքավորներին մեխանիկաբար կոոպերացնելուց, որպեսզի չկրկնվեն այն սխալները, որ տեղի են ունեցել կոոպերացիայի աշխատանքների ընթացքում։ Դեպքը հետևյալն է. յերբ սպառողական ընկերությունը, համաձայնության գալով, համապատասխան մարմինների հետ կոոպերացնում եր նշված չքավորներին և նրանց բացակայությամբ պատրաստում եր կոոպերատիվի անդամագրքուլկներ, կոոպերացվածները հրաժարվում եյին մտնել անդամների շարքը, վախենալով այն

պատասխանատվությունից, վոր դրվում եր նրբանց վրա վորպես անդամի։ Պատահում եր նաև, վոր, յերբ ներկայացվում եր չքավորների ցուցակները և ընկերությունն անդամագրում եր դրանց, հետո պարզվում եր, վոր այդ ցուցակներից մի քանի հոգի կամ մեռել եյին և կամ հեռացել տվյալ գյուղից։

Պետք է պատրաստել յուրաքանչյուր փայատիրոջ անհատապես, պետք է նախորոք տանել լուսավորության աշխատանք, պետք է առաջին հերթին կոոպերացիայի շուրջը համախմբել ակտիվ անդամներ, և այն ժամանակ կլին չքավորությունը, հիմնական մասսան, վորը գյուղում պետք է քաշվի կոոպերացիայի մեջ, կբռնի կոոպերացիայի ճանապարհը։

Խորհուրդ չտալով քաղաքի աշխատավոր կանանց անապահով խավը կոոպերացնելու նրպատակով ֆոնդեր ստեղծել, այնուամենայնիվ այդ միջոցը թույլատրելի յե, սակայն այն դեպքում, յեթե այդ կրում է կոոպերատիվ հասարակայնության բնույթ, յեթե այդ արվում է մասսայի ինքնագործունեության շնորհիվ։

Որինակ, լինում են դեպքեր, յերբ ակտիվ տանտնտեսուհիները կոոպերացիայի ոգնությամբ կազմակերպում են ներկայացում կամ յեթե փայատերերը լիազորական ժողովներում

իրենց ձեռներեցությամբ այդ նպատակի համար իրենց հասանելի ոգուտից հատկացնում են վորոշ գումար, և կազմում են ֆոնդ՝ փոխարինաբար տանտնտեսուհիներին կամ ցած աշխատավարձ ստացող բանվորուհիներին տալու համար։ Այդպիսի ձեռներեցությունը պետք է աջակցություն գտնի կոոպերացիայի կողմից։

Բարձրացնել նյութական շահագրգռությունը, բանվորուհուն ու գեղջկուհուն զգալ տալ իրենց անդամության առավելությունները — նույնպես մի հիմք է, վորի վրա պիտի կառուցվի կանանց կոոպերացումը։

Նյութական շահագրգռությունը բարձրացնելու ավելի իրական միջոց հանդիսանում են ապառկոոպերացիայի կողմից կառուցվելիք կենցաղային հիմնարկությունները, այն է. լավ մբուրները, մանկապարտեզները կամ հրապարակները, ուր պետք է ընդունվեն առաջին հերթին փայատերերի յերեխաները, և առանձնապես այն ընտանիքների յերեխաները, վորոնց մեջ կան 2 կամ մի քանի փայատերեր։

Մեզանում դեռևս բավականաչափ չեն գբնահատում կանանց կոոպերացման զանազան հասարակական մեթոդները, բավականաչափ չեն քաշել այս գործի մեջ կոոպերացիայի շուրջը համախմբված կանանց ակտիվը։ Վերցնենք այդ

աշխատանքի թեկուզ այսպիսի ձև, այն է՝ կազմակերպություն կոոպերատիվ ակտիվ կանանց անդամագրող խմբակի։ Անհրաժեշտ է պաշտպանել ու ծավալել այդպիսի խմբակները, կազմակերպելով մրցանակ լավ անդամագրողների համար, գործադրել նաև նյութական խրախուսանք դրանցից այնպիսիների նկատմամբ, որոնք ամենից լավ և ամենից շատ են անդամներ ձեռք բերում, չխոսելով արդեն հասարակական խրախուսանքի մասին։ Կարելի յե գործադրել նաև հետևյալը. խոսել տեղական կոոպերատիվ ժամուլի հետ, և լրագրի միջոցով մրցության կանչել առանձին բանվորուհիներին և գեղջկուհիներին, որպեսզի նրանք փայ մուծեն և անդամագրվեն կոոպերացիային։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038673

(104)

A I 3864

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.